

պատրաստուում էին արքունի գինիք: Նոյնպէս և «Թագ արքունի» նշանակում է ուղղակի «այգի»: Այժմ իսկ յԱլլարատեան դաշտի այգոյ մշակողը, որթոյ տաշտին և տնկին քող են ասում որ լեզուական փոփոխութեամբ կրնայ նոյնանալ ընդ «Թագ» ինչ Բայց ոչ լոկ ենթադրութեամբ այլ իսկութեամբ կարեմք հաստատել . «Թագ» պարսկերէն լեզուով նշանակում է, որթ, այգի: Ուրեմն Դղակին սպանելու տանում էին այգոյ մէջ, որ տալիս է գինի որախութեան, սիրոյ, կենաց, և այլն. և նա արիւնքում է չլաղախել գինին իւր արեամբ «և զոր Թագդ արեամբ շաղախել»: Թագ կամ Թակ (Բուզանդ գիտէ զ— փոխել միմեանց հետ) նոյնպէս գինի նշանակելու չեն հակասել. զոր օրինակ կանա Գալիլեայ հարսանիքին Յիսուս կը հրամայէ «լցէք զԹակոյկսդ Զրով», այսինքն գինոյ ամանները: Այսպիս կարծեմ բաւական է համոզել որ այստեղ «Թագ արքունի» նշանակում է այգի որթոյ և ոչ Թագ արքունական որ ի զլուխն զնի: Անցնինք «պատմունակաց» բառին: Ասացինք որ նախնական եղած է Պատրուականաց և «Թագ» բառի շնորհիւ սխալ սրբագրուել է: Դղակի նման մի սպանութիւն է և տարարաղդ Գնելոյն: Արշակ նոյնպէս Շահապիվան գիւղն էր, և կարգադրում է Գնելայ մահը, զոր «անուրիս գնային մօտ ի Սիւան արքունի... մօտ յորմածս արգելոցացն որոյն էրէոցն»... բազմոցացն արքունի» և էթէ համեմատունք այս Դղակայ անցքերին՝ «փոխանակ Սիւան արքունի», ունինք Թագն արքունի կամ տուն Թագաց: Իսկ «մօտ յորմածս արգելոցացն որոցն էրէոցն».. «մուծին զնա ի ներքս ի տունն պատրուականաց, կապել ձեռս յետս» ճիշդ իբրեւ անասուն մորթելու համար: Դղակ հասկանալով թէ ի՞նչ անարգական մահ է գալիքը, դարձած առ Թագաւորն ասում է. որ զիս հրապարակի վերայ պէտք էիր սպանանալ և ոչ թէ ըշել այգոյ խորշերը որսի անասունների կամ ուլերի հետ մորթել և իմ արիւնով շաղախել այն հողը ուր Թագաւորի հա-

մար որթեր տնկուած են: Աւելորդ եմ համարում կանգ առնել այն մտքի վերայ իբր թէ այդ ետ ինկած գիւղում պահուում էին Թագաւորի Թանկագին Թագն և բեհեզն ու ծիրանին, վասն զի այդ Թանկագին գանձերի տեղերն անսովի բերդերն էին, «Անին, Արտագերք և Դարինք, Անգեղ», և այլն զորս յիշէ ինքն Բուզանդ: Եզրակացնում եմ. «Տուն պատրուականաց» է որսի կենդանիների կամ ուլերի և զառնուկների քաղաքորմն, որոնցից Թագաւորի խորտիկներ և խորովածներ էին պատրաստուում: Իսկ «տուն Թագաց» է զընտան կամ գինոյ կարասների տեղը, մասնաւոր ուր գինիներն էին պահուում կամ նոյն իսկ խաղողի որթերը, որոնցից պատրաստում էին Թագաւորի համար գինի սեղանոյ և արքունի տաճարին:

Հ. ԳԱՐԻԷԼ ՆԱԱԳԻՏԵԱՆ

Շարայարելի

Հ Ն Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

Ս Ր Բ Ո Յ Ն Շ Խ Ա Ր Ն Ե Ր Ը

(Շար. տն'ս 1906, էջ 548)

Դ. ՀԱՅՈՑ ՔՈՎ. — Աւելորդ է խորհիլ՝ թէ հայ եկեղեցին իւր սկզբնաւորութենէն իսկ կարենար տարբեր ընթացք մ'ունենալ այս մասին քան միւս եկեղեցիք: Դ-Ն դարուց մասնաւորաց բազմութիւն մ'իրենց խառն վկայութեամբ լիւրի և մանրամասն կ'ապացուցանեն մեզ զայդ: Ազաթանգեղոս այսպէս գրել կու տայ Դիոկղետիանոսի՝ իւր նամակին մէջ. քրիստոնեայք «սպանելոց ոսկրիչ կը պուշտեն» (ԺԳ), փոխանակ քրիստոնէաբար ըսելու՝ թէ կը մեծարեն: — Լուսաւորիչ Հոփսիսիմանց «Երանելի մարմնոց արկղերուն վրայ ընկած էր ծնրաղոր, պաղատանք մատուցանելու» (անդ, ձեմ): — Յաճախապատում գիրքը նշխարաց հրաշագոր-

ծութեան զօրութիւնը կը հաստատէ. « Անոնց ոսկերաց նշխարները փրկութեան շնորհհնէր կ'ընծայուին հաւատացեալաց ժողովներուն մէջ, ... որպէս զի երեւի Աստուծոյ սէրը որ անոնց նշխարաց մէջ կը բնակի և հրաշքներով ճանչցուի երկրիս վրայ » (ԺՁ, 160): — Եղեմիկ ձայնակից է ասոր. « Մարդիկ՝ սուրբ մարտիրոսաց նշխարներուն ապաւինելով՝ կ'ազատին դիւաց տանջանքներէն » (Ա, Իա): — Մանդակունին նոյնը կը հաստատէ. « Եթէ մէկն հաւատովք Աստուծոյ դիմէ, ազաշանօք մարտիրոսաց նշխարներուն ապաւինի, ցաւոց բժշկութիւն, հիւանդութեանց հալածումն, դիւաց ելումն ու մեղաց թողութիւն կ'ընդունի » (ԻՁ, 196): Եւ նշխարները բարեխօս կը դաւանի. « Բաւական չենք եղի մարտիրոսաց նշխարները՝ որ եկեր դադարեր են քովդ, ու միշտ քեզ համար կ'աղօթեն » (անդ, 202): — Ըստ փարպեցւոյն՝ Յազկերտ այսպէս լսած կը լինի քրիստոնէիցմէ. « Անոնց ոսկերքը, որ իւրեց Աստուծոյն համար կը մեռնին, եթէ մէկն լսեցեց ունեցալ իւր տան մէջ, թէ եւ փողը փշրանք մը լինի, չար ու կարարդական բան մ'անոր և իր տան ու սիրելեաց չի մօտենար, Զայս ալ կ'ըսեն՝ թէ աստեալսօսութեան մէջ յաշտութիւն կուտան, և իմաստութիւն, քաջութիւն ու պահպանութիւն կը շնորհեն » (ԻԲ): — Պերոզ գեղեցիկ կ'ըսէր. « Լսած եմ անոնց կրօնքին համար, թէ այն պատիւը չեն ընկեր կենդանեաց՝ ինչ որ այդպիսի մեռեալ կ'ընեն » (անդ, ԿԳ): Եւ Դեմաքարու, թէ Դեւոնդեանց մարմնոց պահպանները եթէ ազահութիւն ընէին, և « քիչ մ'ակնարկէին կարաւանիս մէջ գտնուած քրիստոնէից, անոնց իւրաքանչիւր մարմնոյն կշռով ոսկի կ'առնուին » (Եղիշէ, Ը): — Ասոր կը նմանի ԺԲ դարուն Յովսէփ վկայի նախատակողաց ըրածը, որոնք հանցեցին անոր մօրթը՝ « որպէս զի իրենց աշխարհը տանին՝ ինչք ժողովելու համար » (Ուրտ. 1897, յէջ 47): — Նոյն դարուն Խոսրով վկայի մարմինն ալ կը փորձեն այրել, « որպէս զի պատուական վկային նշխար-

ները չպատուուին » (անդ, 40): — ԺԳ դարուն՝ երբ Կարնոյ եպիսկոպոսը Գրիգորիս կը նահատակուէր, « բարեպաշտ կին մը գլխոյն վարշամակը սրբոյն առջեւ ձգեց, և չթողուց որ արիւնը գետին վազէ, այլ արեան բոլոր կաթիլները մաքրելով՝ առաւ իւր սուրբ տարաւ մեծ յուսով » (Հյստ. ՅՄԻԵ):

Որոք բուն մարմնէն զատ՝ աւելի կամ նուազ չափով մը կը մեծարուէին անոնց սեպհական իրերն ալ: 1. Հոնդերոններն ու նմանիք, Խոսիկ Դեւոնդեանց մարմինները տապաններու մէջ ամփոփելու ժամանակ՝ միասին առած « և նշանակած էր իւրաքանչիւր տապանակի նոնդերոններն ալ » (Եղիշէ, Ը): Թ դարուն Զորոյ վանուց մէջ պահուած ու յարգուած կը պատմուի լուսատըչի « սուրբ սեղանը, հովուական գաւազանը, պատկերաւոր մատուին ու ցօտին » (Թով. Արծ. 68), առաջին երկուքը ծանօթ Յովհ. կաթողիկոսին ալ (ԼՁ), և զորս Որբելեան յետոյ փոխադրուած կը դնէ Կիլիկիոյ հայրապետանոցին մէջ, այդ նշխարաց հետ յիշելով նաեւ սրբոյն « աբոն ու ձողաբայր » (ԿԷ): Թովմայի յաւելուածը զատոնք ժամանակ մը պահուած կ'աւանդէ Ողթմարայ եկեղեցւոյն մէջ եւս, ինչպէս նաեւ Ս. Հռիփսիմեայ « աշխատասէր ոտից հողաբայրներ և սուրբ արեամբը ներկուած փողոսատր » (349), Որբելինի քով բացատրուած՝ շարուն՝ որ է դաստապակ սրբոյն Հոփսիմեայ և Կեթեղոս ներկեալ արեամբ » (ԿԷ): Խոնդր չէ ատոնց վաւերականութիւնը. կը բաւէ որ իբր այդպիսի կը յարգուէին. այս է հոս մեզի կարեւորը: — 2. Զարչուրանոց գործիք: Խոսիկ Դեւոնդեանց « երկաթեայ կապանքներն ալ իւրաքանչիւր ոսկերաց հետ դրեր էր » ու հետը տարած (Եղիշէ, Ը), հարկաւ իրբեւ յարգելի բան մը. ապա թէ ոչ պիտի նետէր կամ թաղէր անոնց մարմնոյն խոնաւ մասանց հետ: Այս կէտն աւելի կը լուսաբանուի Պերոզի խօսքով, զոր կ'ըսէր Գիւտայ համար՝ թէ « քրիստոնէից համբուրել պիտի չտամ անոր կապանքները » (Փրպ. ԿԳ): Ը դարուն

գլխաւիթ դունեցին խոցող գեղարարը կը գնեն, « որպէս զի խաչ ձեւանալով պատուի » (Սոփ. ժիթ. 95)։ Նոյնպէս այն փայտը՝ որուն վրայ նահատակուեցաւ նոյն վկայն, « խաչ շինելով՝ կանգնեցին գերեզմանին վրայ » (Սոփ. ժիթ. 95)։ Եւ այն ժառը՝ որուն կապուեցաւ խոսքով վկայ, քահանայ մը կը գնէ և խաչ մը կը շինէ (Չմէ. Գ, 436)։ — 3. Գերեզման և նոյն ժողովանէն կթող. կը պատմէ՝ թէ « օրհնութեան նոյն առի այն փլած դարակէն՝ » ուր ծածկուած էին երբեմն լուսաւորչի նշխարները (Իթէ)։ Ըստ Մեսրոպ երեցուն՝ շատեւրը Ս. Ներսիսի « գերեզմանէն նոյն առիւնով՝ կը բժշկուէին այն ցաւէն որ ժանգ կը կոչուի » (Սոփ. Զ, 115)։ Ժ դարուն՝ Մովսէս Հանգուցեալ Դաւիթ եպիսկոպոսի եղբորորդին՝ անոր գերեզմանէն « քիչ մը նոյն » աննով կը տանի իւր հետ ի Պօլիս, ուր հրաշագործութեամբ կը հռչակուի այն (Նար. Պտ. աղօթք. 377-8), մինչդեռ այս կողմէ անոր գերեզմանէն ալ բժշկութեամբ կը փոռաւորուէր (անդ, 376)։ Երբ մեծին Ներսիսի նշխարներն յայտնուեցան ժԳ դարուն, հաւատացելոց բազմութիւնը կու գային « սուրբ գերեզմանին երկրպագութեան ու տեսութեան », որ նշխարներէն թափուր էր (Սոփ. Է, 61)։ Կիրակոս կ'աւանդէ՝ թէ Մխիթար Գոշի գերեզմանին « հողը կը տանին միշտ հիւանդ մարդոց և անանոց համար » (Իթի)։ Ս. Սկեհանց վկայարանութեան մէջ եւս կ'ըսուի, թէ « մինչև ցայսօր երկու տեղերուն (ճգնութեան և նահատակութեան) հողը Գրիստոսէ շնորհուեցաւ ցաւոց բժշկութեան համար » (Սոփ. ժիթ. 65)։ — 4. Սկսեալ կանք, Յովհաննէս կաթողիկոս ի թորդան ելլալով, « կտրեցի, կ'ըսէ, մաս մ'այն ծառէն՝ զոր Ս. Լուսաւորիչ տնկեր էր իւր ձեռք » (Իթէ)։ Նոյնպէս կ'երթայ Դաւանաղի՝ խմելու համար այն աղբիւրէն՝ « ուսկից սուրբ և ամբիժ ձեռքն ըմպած էր Գրիգոր »։ Դեռնոյնաց պատճառաւ դարձող մոզպետը « կը լուար ու կը սրբէր զանոնք բանտին չարչարանքներէն, և սրբոց յաւանդան չորս աննով իւր մարմ-

նոյն վրայ կը թափէր » (Եղիշէ, Ը)։ Այս վերջինը եթէ կարելի է այսպէս ըսել՝ կէս նշխարներ կը համարուէին։ — Բոլոր այս նիւթերը, որոնք մարմնոյ մասունք չէին, հաւասարապէս յարգուեր են միւս քրիստ. եկեղեցեաց մէջ ալ, և զորս չեմ ուզեր մի առ մի յիշել՝ չծանրաբեռնելու համար յօդուածս. հետաքրքիրը կրնան կարդալ զոր օրինակ՝ Մարտիրոսայ բառարանը (յէջ 694-5) և ուրիշներ։

Ե. ՓՈԼԵՆԻ Ի ՀԱՆԳԻՍՏ ԶՆՆԻՍՏՈՒՄ. այսպէս կը կոչուէր այն հանդէսը՝ որով նահատակի կամ սրբոյ մը մարմինը կամ ոսկերքը կը գետնոյն պատշաճ տեղոյ մը մէջ։ Ազգայնագիտութեան վրայ Մկրտչիւն և Աթանազիոսայ նշխարաց համար, թէ « զսուրբս ի հանգիստ փոխեցին » (ՃԺԻ). և Հովսէփմանց համար՝ թէ « յիւրաքանչիւր հանգիստս մարտիրոսական բնակութեան շինուածոյ փոխեցին » (ՃԶ). Մխիթար Գոշ կ'աւանդէ՝ թէ խոսքով նահատակին ծնողքն « ի հանգիստ զգալն փոխեց վկայ » (Արքտ. 1897, յէջ 41)։ Ս. Մեսրոպ փոխադրութիւնն այսպէս կը նկարագրէ Կորնէն. « Հանդերձ աշխարհական ամբողջ, աղմուսիք և օրհնութեամբ և հոգեւոր ցնծութեամբ, կանրեղօք վառելովք և չափիչ բորբոքելովք և ամենայն լուսաճանաչ գնդին » տարին հանգուցին (Չշականի մէջ, « զօրինաւոր յիշատակ կատարեալ » անոր վրայ (27)։ Սոյնպէս փոխադրուեցաւ Ս. Սահակ ալ (անդ, 25-6)։ Այդ « օրինաւոր յիշատակն » աւելի որոշ կը գտնենք Շահապիվանի ժողովոյն կանոնաց մէջ. « քայց ի նշխարացն յանուն զոր բերին՝ (տես յաջորդ զԼ.), մեծապէս տօնախմբեացն յամենայն տարուշ յօր բերելոյն, և պատուոյ և սրբութեան զգոյշ (լիցին), զի մի ի ցասումն մտեալ սուրբ ճգնաւորացն՝ որ վասն Գրիստոսի չարչարանացն, ցասումն աշխարհի հասցէ փորձանակ բարեխօսութեան » (ժիթ)։ Սոյնպիսի էր Ս. Ատովմանց փոխադրութիւնն ալ Ե դարուն. « Մատուցին ի տեղի հանգստեան իւրեանց՝ լապտերք լուցելովք և բուրմամբ խնկոց, սաղմոսիւք և երգօք հոգեւորք՝

հանդերձ հսկմամբ » (Ոոփ. ԺԹ, 81) : Սոյնպէս և Դաւթի դունեցեալն թաղումը (անդ, ԺԹ, 95) : Կ'արժէ յառաջ բերել Ս. Ներսիսի նշխարաց փոխադրութիւնը : Երզնկայի եպիսկոպոսը « գնաց քահանայական դասուք և պատուաւոր արամբք, և առեալ զսուրբ նշխարան (գտնուած տեղէն)՝ բերէր ի քաղաքն մեծապէս փառօք և բերկրալից ցնծութեամբ. որում ընդ առաջ ելեալ բազմութեան քաղաքին՝ լցեալք անպատում խնդութեամբ, տարեալ եղին ի մեծահարաջ և ի գեղեցկաշէն եկեղեցին » (Ոոփ. Է, 62) :

Հին մաշտոցները, սկսեալ Ս. Ղազարու երիցագոյն օրինակէն ժԱ դարու, ունին յատուկ « կանոն գնշխարս սրբոցն ի հանգիստ փոխելոյ », ուր կ'ըսուի ըստ նոյն օրինակին. « Մտանեն ի տեղի արժանի դնելոյ » և կը պաշտեն թիւ ճԼԲ և ճԺԵ սաղմոսները. յետ որոյ ընթերցուածնէր, քրդ. Սուրբ ճգնաւորօք, և աւրօթք մը :

Շահապիւմանի ժողովին կանոնաց համեմատ՝ եպիսկոպոսին գիտութիւնն անհրաժեշտ էր նշխարաց փոխադրութեան համար. « Եթէ ոք նշխարս մարտիրոսաց կամի դնել, առանց եպիսկոպոսի աշխարհին մի՛ դնիցէ » (կան. ԺԵ) : Ուրիշ գաւառէ բերուած նշխարաց համար կը պահանջուէր երկու վիճակաւորաց ալ վաւերացումն. « Եւ եթէ ոք ի սուրբ տեղեացն մարտիրոսս բերցէ, առ եպիսկոպոսն բերցէ՝ վկայութեամբք և թղթովք եպիսկոպոսին ուստի երբն, և իւրեանց եպիսկոպոսին հրամանաւ դիցեն ուր և արժան է դնել » (անդ) :

Ձ. ՆԵՒԱՐԱՑ ՊԱՆՊԱՆՈՒԹԻՒՆԸ զանազան կերպեր ունէր : Սովորաբար կը թաղէին զանոնք, երբ նոր նահատակուած էին, որպէս զի մեղէն մատուցը փաշին ու միայն չոր ոսկերքը : Իսկ եթէ հեռի աշխարհ պիտի փոխադրուէին, դիւրութեան համար ոսկրները կը մաքրէին մաքմէն և այնպէս կը տանէին, ինչպէս ըրաւ Խոժիկ Ղեւոնդեանց (Երէն, Ը) : — Թաղելէ յառաջ կը դիպազարդէին զանոնք

անոյշ խղերով ու խնկերով, ինչպէս եղաւ Հոփսիմեանց (Ազթ. ճԴ), Ս. Սահակայ (Կոր. 25), Ս. Շուշանկան (Ոոփ. Թ, 46), Ս. Դաւթի դունեցեալ (անդ, ԺԹ, 95), և այլոց : Երզնկայի վերոյիշեալ եպիսկոպոսը Սարգիս՝ մեծին Ներսիսի « սուրբ ոսկերաց վրայ կ'պած հողը լուաց անապակ և անուշահամ գինով՝ որ խառնուած էր անուշահոտ ծաղիկներով, և օծեց խնկահոտ խղով » (Ոոփ. Է, 63) : — Ապա կը պատէին սպիտակ կոտով, ինչպէս Ս. Ղեւոնդեանց (Փրպ. ԾԷ), Ս. Շուշանկան (Ոոփ. Թ, 46), Ս. Ատովմանց (Ոոփ. ԺԹ, 81) մարմինները, և Ս. Ներսիսի ոսկերքը (անդ, Է, 60) : — Յետոյ կը զետեղէին տապանի մէջ, ինչպէս արդէն բոլոր ննջեցեալները : Հոփսիմեանց տապանը կը նուիրաբարդուին՝ « մայրափայտեայ՝ բեւեռապինդ » (Ազթ. ճԴ) : Ըստ Զենորայ՝ — կամ լաւ եւս է դարու սովորութեան՝ — Լուսաւորիչ կարապետին նշխարքը կը դնէ « ի տապան բրտեայ », և զայս՝ երկրորդ « պղնձի տապանի » մը մէջ (33). Աթանագինէսին « ի կաւէ տապան » (անդ), և այդ նշխարներէն մաս մ'ալ « ի քարեայ տապան » (38) : — Հայք Լուսաւորչին թանկագին կերպասներ տուին Հոփսիմեանքը պատելու համար, և ոսկեղէն ու արծաթեայ դրամներ՝ տապանաց մէջ դնելու համար (Ազթ. ճԴ) : Լուսաւորիչ կարապետին նշխարաց հետ զետեղեց պատուական ակն մը՝ կեսարիայէն բերուած (Զենոր, 33) : — Յետ այս պատրաստութեանց կը փակէին տապանը, և եպիսկոպոսը մատանեաւ կը կնքէր զայն. այսպէս Լուսաւորիչ Հոփսիմեանց արկղերը « կընքէր քրիստոսանշան (խաչապատկեր) կընքով » (Ազթ. ճԴ), զոր ապա տեսնելով Կովտաս կթղ. Ս. Սահակայ կնքոյն հետ, « եղ և զիւրն եւս կնիք ի վերայ նորա » (ՅՏ. Կթղ. ԺԷ) : Ս. Սահակայ տապանն ալ կնքուեցաւ « քրիստոսադրոշմ կնքով » (Կոր. 25) : Նաեւ Երզնկայի եպիսկոպոսը Սարգիս՝ Ս. Ներսիսի ոսկերաց արկղերը « կնքէր իւրով մատանեաւ » (Ոոփ. Է, 67) : Այս կնքումն նոյն նշխարաց վաւե-

րականութեան ապացոյցն էր ապագայից համար : — Տապանին վրայ սրբոյն առնեն ալ կը գրուէր, ինչպէս խոսիկ Ս. Ղեւոնդեանց « Իւրաքանչիւրին անուններն ուսած և տապանաց վրայ նշանակած էր » (եղիշէ, Ը) :

Ապա կը գետեղէին տապանը գերեզմանին մէջ, մերթ նոյն իսկ իրենց նահատակութեան տեղւոյն վրայ, եթէ քրիստոնեայ երկիր էր և յարմարութիւն կար, ինչպէս եղաւ Հոփսիմեանց (Ազթ. ճԳ) : Երբեմն աւելի պատշաճ դատուած տեղեաց մէջ զոր օրինակ՝ եօթն խոտաճարակաց մարմինները թաղուեցան Ս. կարապետին մերձաւոր պարտիզին մէջ, Անտոն և կրօնիդէս ճգնաւորաց քով (Յոհ. Մամ. 20) : Յովսէփ վկային մարմինն « ի տեղի մի բարձրաւանդակ ... հանդէպ գիւղաքաղաքին Գառնու, ի պահպանութիւն գաւառին այնմիկ » (Արրտ. 1897, յէջ 47) : — Նշանաւոր սրբոց նշխարաց վրայ յատուկ տաճարներ կը կառուցուէին, ինչպէս բրաւ Լուսաւորիչ Հոփսիմեանց, Գայանեանց, կարապետին և Աթանազիոնայ (Ազթ. ճԳ, ճԺԳ), Անդրէի ու Ղուկասու (Չեն. 15-6), և Ռսկեանց նշխարաց վրայ (Սոփ. ԺԺ, 64) : Մոկացի իշխան մը Եղիշէի ճգնաւորանին մօտ (Սոփ. ԺԱ, 44) : Ներսէս Շիւնողի Լուսաւորչի վիրապին վրայ (Յհ. կթղ. ԺԺ) : Յովհանն կթղ. Լուսաւորչի նշխարները ծածկող տեղւոյն վրայ (ԴԵ), և այլն : Եւ այդ տաճարը ըստ սրբոյն կը կոչուէին վկայարան (Ռուզ. Գ. 9), կամ մարտիրոսարան (կոր. 27) : առաքելարան (Ռուզ. Ժ. 9) : մարգարեարան կամ մարգարեանոց (Ռուզ. Գ. 9, Ժղ), որոց մէջ ամէն տարի հանդիսիւ նոյն սրբոյն յիշատակը կը կատարուէր (անդ) : — Երբեմն պարզ խաչ մը կը տնկէին, ինչպէս խոտաճարակաց Յհ. Մամ. 20) և Դաւիթ Դուռեցւոյն (Սոփ. ԺԺ, 95) գերեզմանաց վրայ : — Մերթ կը հանգուցուէին զանոնք պատրաստ եկեղեցեաց խորաններու մէջ, ինչպէս Ս. Սահակայ մարմինն « ի մարտիրոսական խորանին » (կոր. 25), նոյն պատճառաւ այսպէս կոչուած : Ս. Մխարբայ մարմինն ալ

զրին « ի ներքապոյն խորանին » (Ոշական գիւղի եկեղեցւոյն (նոյն, 27) : Տաթեւացին կամ կ'անգիտանայ և կամ իւր ժամանակի նորամուտ սովորութեամբ կը խօսի՝ երբ կ'ըսէ. « Մարմինը սրբոց ի գաւիթս պահին և ոչ յեկեղեցի » (Հրց. Թ. 1Ժ) :

Անապական նշխարաց հետ՝ ինչպէս են ոսկերը՝ ուրիշ եղանակաւ կը վարուէին : Զանոնք կը ցրուէին ամենուրեք՝ յարգելու համար, ինչպէս Եղիշէ ըսել կու տայ Գինշապոյ՝ Ղեւոնդեանց նշխարաց համար. « զի մի՛ այլադեմնն եկեալ՝ բառնայցեն զուկերս դոցա, և բաշխույ սփռեցեն ընդ աշխարհն ամենայն » (Ը) : — Զասոնք կը պահէին զլիսաւորապէս եկեղեցեաց մէջ. Ս. Սահակայ մարմինը դրուեցաւ « յարկեղ սրբոյն » (կոր. 25), որ ընդհանուր նշխարաց ընդարձակ տապան մը կ'երեւի : Յովսէփ վկային գլուխը կը պատմուի « թողեալ յեկեղեցւոյ » (Արրտ. 1897, յէջ 48) : Ս. Ներսիսի նշխարաց մէկ մասն յանձնուեցաւ եկեղեցւոյ պաշտօնէից՝ ուխտաւորաց յարգութեան համար, « և այն կայր յեկեղեցին կնքեալ մատանեաւ և պահեալ զգուշութեամբ » (Սոփ. Ը, 61) : — Ս. Սահակայ վերոյիշեալ արկիւն զատ՝ ծանօթ են ինձ հետեւեալ նշխարանոցը : Է դարուն կեսարիայէն տէրունական խաչին մաս մը բերուելով՝ դրուեցաւ « ի զարանն որ ի վերայ սրբոյ սեղանոյն » Գլաւայ եկեղեցւոյն (Յովհ. Մամ. 54) : Ինչ որ կ'երեւի թէ ուրիշ նշխարաց ալ պահարան էր : — Յովհաննէս կթղ. կը պատմէ՝ թէ Լուսաւորչի գլուխը Ներսէս Շիւնողի ձեռամբ « ի գրդոցի եղեալ », որ է սուփ, կը պահուէր Առաքարի եկեղեցւոյն մէջ (ԺԺ) : — « Սմանք, կ'ըսէ Որբեղեան, յորմ եկեղեցւոյն պատուումն (պատուհանաճեւ խորշեր) գործեալ՝ զնէին զիրաքանչիւր սուրբս ի ներքս յորմ եկեղեցւոյն » : Նոյն է ասոր հետ Ապրանից և կեղեցւոյն մէջ Աստուածածին խորանին նշխարանոցն « ի շինուած միջոցի որմոյն » (Նարեկ. Պատմ. Ապր. Խչ. 385) ուր կը պահուէին շատ մասունք : Այդ պատուհաններէն են այժմեան ընծայարանը, որոց

մէջ կը պահուին պատարագի նուէրները՝ որոնք հին ատեն աւանդատան մէջ կը դրուէին։ — Սմբատայ ծանօթ է « պահարան սրբոցն յոսկւոյ և արծաթոյ և յաւանց զարդարած, զոր տէր Ներսէս (Շնորհալին) յառաջ էր շինեալ, և յետոյ տէր Գրիգոր Ապիրատն փարթամացոյց և զրեաց ի վերայ զերկոցունց (Իւր և Ներսիսի) աւանդան » (Տրգր. 114-5)։ Այս պահարանին մէջ բազմաթիւ մանր նշխարներ կային, Նոյնապիսի և շատ անուանի է կոստանդին Բ կաթողիկոսի և Բ Հեթմոյ պահարանն ալ՝ Սկեւոյի Ս. Փրկչին համար շինուած, և որ ցարդ կը պահուի Լէիթայի Թանգարանին մէջ և է խառակուսի կանգնածն առիւթ մը, նոյնաչափ քանդակազարդ զոյգ դնով։ (Տեգր. Սիւս. 107-112)։ — Երեւելի սրբոց գլխաւոր մասանց համար յատուկ նշխարաւորներ կը շինուէին. Երզնկայի յաճախ յիշուած Սարգիս եպիսկոպոսը Ս. Ներսիսի երկու բազուկները « յարծաթոյ և յոսկւոյ » պատել տուաւ՝ « մանրամասն յորինուածով », այսինքն ձեռաց ճիշդ ձեւը պահելով։ Նոյնպէս շինել տուաւ « զլուխ արծաթեղէն՝ յարմար մեծահասակ անձինն », բերանին և այտից տեղերը բաց թողլով, ու ձակաւորն վրայ երեք խաչաձեւ հաստաւորներ, ոսկից կ'ենրեւէր բուն զլուխը (Սոփ. Է, 62-3)։

Նշխարներէն կը զետեղէին նորաշէն եկեղեցեաց հիմանց մէջ, Որբեղեան կը յիշէ՝ թէ թ դարուն Տաթեւոյ եկեղեցւոյն կառուցման ժամանակ՝ Պետրոս և Պաւլոս առաքելոց նշխարներէն խորհրդապէս « Եղան ի ներքոյ սեանց (երկուց) » և բազմաթիւն սրբոց նշխարաց անդ գումարելոց, առաքելոց, հայրապետաց, մարտիրոսաց եղան ի հիմունս և յանկիւնս եկեղեցւոյն » (Խ)։ Յովհաննէս կթղ. ալ Առապարի Ս. Գրիգոր (նախկին Զուարթնոց) եկեղեցւոյն մէջ գիտէ կամ կը համարի՝ թէ հիմնարկողը Ներսէս Շինող « ի ներքոյ չորից սեանցն հաստահեղուսից բաժանեալ զնշխարս ոսկեբաց սրբոյն Գրիգորի » (ԺԺ)։ Մեր յառաջագոյն տեսած (աստ Գ) սովորութեան ակնարկութիւնն է

լուսաւորչի ընծայուած կանոնաց հետեւեալը. « Պարտ է՝ ուր մարտիրոսաց նըշխարք դնին՝ ի վերայ պատարագ մատուցանել » (կան. ԺԷ)։

Նշխարներէն կը տրուէին հաւատացելոց ալ՝ իրենց տանց մէջ պահելու համար։ Խոսովի Ղեւոնդեանց ոսկերներէն կը բաշխէր « առաքելի քրիստոնէից, որք ի կաւաւանին էին. որք ընդունէին՝ հաշուելով գիւտ փրկութեան ոգւոց և մարմնոց » (Փրպ. ՄԷ)։ Մանօթ է մեզ սոյն պատմիչս միւս խօսքը, « եթէ որ՝ ասէ՝ յիրառ տանն ունիցի ինչ անտի » (Մ)։ Ինչպէս նաեւ բարեպաշտ կնոջ մ'ըրածը, որ կարնոյ Գրիգորիս եպիսկոպոսին արիւնը վարձամակի մէջ « տարաւ ի տուն իւր մեծաւ յուսով » (Հյպտ. ՅԻԵ)։ — Ասոնց ալ կ'ամփոփուէին փոքրիկ նշխարատփոց մէջ, որոնք յաճախ հաւատացելոց վզէն կը կախուէին։ Այսպիսի է Բ Հեթմոյ ոսկեղէն և արծաթեայ ականակուտ քառակուսի տիկիւր, բովանդակող քանի մը նշխարաց, որոյ մանր նկարագիրն ու պատկերը տուաւ Ազգգր. Հանդէսը (1896, Ա, 153)։

Է. ՆՇԽԱՐԱՅ ՑԱՊՈՒԹԵԱՆ ՁԵԽԵՐ ԷՆԻՆ.
1. Համբոյր. փարպեցւոյն Պերոգի ընծաւ յոժ խօսքին մէջ կարդացինք՝ թէ « ոչ տամ համբոյրի քրիստոնէից զկապանս նորա », այն է Գիւտայ (կր)։ Ինչպէս նաեւ Ս. Ներսիսի նշխարաց մէկ մասն եկեղեցւոյ սպասարարաց յանձնուեցաւ՝ « ի համբոյր և ի տես ուխտականաց ժողովողեանն՝ որ գային յամենայն կողմանց » (Սոփ. Է, 61)։ — 1. Երկրպագութիւն. Պերոգ կ'ըսէր դարձեալ Գիւտայ համար. « և ոչ (տամ) երկիր պագանել ոսկերաց նորա արպես ու վոյրութիւն » (Փրպ. կր)։ Հաւատացելոց բազմութիւնը կու գային « յերկրպագութիւն և ի տեսութիւն սուրբ գերեզմանին » մեծին Ներսիսի (Սոփ. Է, 61)։ Շնորհալին կ'ըսէ՝ թէ յետ մահուան « սրբոյն միայն են երկրպագելի մարմինք » (առ Ման. 132)։ Եւ Տաթեւացին՝ թէ « նշխարաց սրբոյն երկիր պագանել վասն օծման շնորհացն » (Հտ. ամբ. ԼԳ)։ — 3. Մերտապագութիւն և սրբոյր. Լուսաւորիչ « ծաւեր կրկնեալ . . .

երթեալ, անկեալ էր զսուրբընկալ արդե-
ղօքն» Հոփիսիմանց՝ «մատուցանել պա-
ղատան» (Ազթ. ձե)։ Մանդակունին կ'ը-
սէ։ «Եթէ ոք ... Պալատեօք ապախնի ի
նշխարս մարտիրոսաց» (ԻՋ, 196)։ Եր-
զընկայի ծանօթ եպիսկոպոսը՝ Ս. Ներսի-
սի նշխարաց ի տես «յարտասուս եղեալ՝
սկսաւ լալ, և ողբական ձայնիւ իբրեկ ընդ
կնկրտեոյ խօսեցով՝ զուրկ արկանէր սրբոյն»
(Սոփ. է, 53)։ — 4. Խեկարկոյրիւն. ըստ
Մանդակունոյն՝ Ս. վկայից նշխարաց առ-
ջեւ սովորութիւն էր «մատուցանել զգո-
լոշի անուշահոտ ինկոցն» (ԻՋ, 202), ու
րոց զործածութիւնը տեսանք նշխարաց
փոխադրութեան հանդիսին մէջ ալ (սատ,
Ե)։ — 5. Լուսավառութիւն. նոյն հայրա-
պետը դարձեալ կը յարէ իբր մասն սո-
վորութեան՝ «և զպայծառութիւն յոսոյն»
զոր կը վառէին նշխարաց ըով (անդ). ինչ-
պէս նաեւ նշխարաց փոխադրութեան առ-
թիւս։ — 6. Տեստեսագործութիւն. լուսաւորչին
համար կը կարդանք՝ թէ «առեալ զաջ
թեւն Մկրտչին, տեստեսագործաց շուրջ զա-
մենայն կողմամբք զաւառին» (Զնոր, 3)։
Իրաւամբ առանձին յարգանք և նուի-
րականութիւն մը կը վայելէր լուսաւորչին
այլ, յայտնի չէ՝ որ թուականէն սկսեալ։
Միայն գիտենք՝ թէ ի սկզբան իլիլիկիոյ
հայրապետական աթոռին մէջ կը պահուէր
(Որբել. Կէ), ուսկից ապա յիջմիածին
տաքունեցաւ (Առաքել)։ — Ենորհալին չի
մոռնար իւր քրոջ մէջ ողջոյն դրկել բաց
ի միւս սրբութեանց՝ նաեւ «ի սուրբ լու-
սաւորչին մերոյ աչիս» (տպ. վեհնոս. 30,
212, 238, 279)։ — Զեռնադրութեանց
մէջ ալ կը մտնէր. նոյն հայրապետը կը
զրէ ի կարս՝ թէ իրենց եպիսկոպոսը ձեռ-
նադրեր է՝ ի միջի այլոց՝ «և սուրբ լու-
սաւորչին աշովս» (213)։ — Գրիգոր ա-
նաւարդացի՝ զՄիսաո թագաւոր օծեց նաեւ
«աշով սրբոյ լուսաւորչին մերոյ Գրի-
գորի» (Հյատ. Յեթ)։ — Կոստանդին Բ
կթղ. երբ պիտի հրաժարէր աթոռէն, «ա-
ռեալ ի ձեռն զաջ սրբոյն Գրիգորի՝ օրհնեաց
զթագաւորութիւնն զայն և զամենայն աշ-
խարհն» (Որբել. Կէ)։

Դիտողութիւն մը։ Բոլոր այս յարգա-
կան ձեւերը՝ զոր տեսանք, կը հաստա-
տուին մեր Դ-Ե դարուց և յոյն ու լատին
աւելի հին հարց վկայութեամբք իսկ։ Ար-
դ'օք ասոնք առաքելական ալ չէին։ Զնք
կարող առ այս նոր կտակարանին դիմել,
զոր ուրիշ առթիւ ցուցի՝ թէ անբաւական
է ըրիտ. Ա դարու ճշգրիտ նկարագրին
համար (Բիւզ. 31 մայ. 1906)։ Եւ ոչ
կրնանք ժխտել զանոնք, գէթ զոմանս։
Երբ մարդ ուրիշէ մը շնորհ մը կը խնդրէ,
անոր ոտքը կ'ընկնի, կը փարի, կը պա-
ղատի. այս բնական գործողութիւն մ'է
ամէն ժամանակի մարդկութեան։ Երբ Ա
դարու հաստատեցաւ Պաշտօնի թաշկի-
նակներէն բժշկութիւն կ'ընդունէին, իրենց
հաւատքն իսկ պիտի ստիպէր զանոնք՝ որ
փարին անոնց, այսինքն չօղփեն, հոմ-
բուրեն և աղօթեն. այս ալ բնական է։
Միւս ձեւերն ասոնց պարզ հետեւանքներն
են, որ պիտի հնարէին կամ նշխարայար-
գութեան հետ փոխ առնուէին առաքելա-
կան դարուն իսկ՝ ի պատիւ այդ նուիրու-
կան և հրաշագործ Տեսագործաց։ Եթէ պնդուի՝
— թէւ առանց փաստի՝ — թէ առաքելալը
չունէին այդ կերպերը, սակայն սա եւս
ճշմարտութիւն մ'է՝ թէ ամէն դար և ա-
մէն երկիր իրաւունք ունեցած է իւր յար-
գանաց և աստուածաշարժութեան յատուկ
ձեւերով վարելու. ինչպէս այսօր իսկ ա-
մէն ըրիտ. եկեղեցի իւր յատուկ ծէսն
ունի։ Անխրաւ է պահանջել՝ որ առաքե-
լոց սեպհական — և մեզ անծանօթ — ձե-
ւերով յարգենք նշխարները։ Այն ժամա-
նակ պէտք էր որ մեր մարմինն ալ անոնց
թիկնոցին մէջ պատէինք ու բոկոտն շրբ-
ջէինք։ Ոչ, կը բաւէ որ մեր դիտաւորու-
թիւնը մէկ է առաքելոց ունեցածին հետ.
մեծարել և օղորտիմ հայցիլ նշխարներէն,
իսկ առ այս սահմանեալ ձեւերն անտար-
բեր են, և ամէնն ալ ընդունելի։

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

